ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 05.06.2015Թ. ԹԻՎ 16/8-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 05.06.2015թ. թիվ 16/8-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստերի վարման ներքին ընթացակարգում» **(այսուհետ՝ Ընթացակարգ)** փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 3-րդ կետի և 5-րդ մասի պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Ընթացակարգի **6.2. կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.2. Առցանց չի հեռարձակում՝

1) խորհրդի դռնփակ նիստը.

2) կարգապահական գործով խորհրդի նիստը, եթե կողմերը չեն տվել իրենց համաձայնությունը.

3) անդամավճար չվճարելու կամ վերապատրաստման չմասնակցելու հիմքով քննվող կարգապահական գործով խորհրդի նիստը.

4) խորհրդի խորհրդակցական (առանձին) սենյակում քննարկումը և քվեարկությունը:»:

12 դեկտեմբերի 2017թ.
թիվ 25/6-Լ

2. Ընթացակարգի **6.3. կետը** շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«Խորհրդի դռնբաց նիստին ոչ փաստաբանի ներկայության հարցը լուծում է խորհուրդը՝ համապատասխան դիմումի կամ միջնորդության հիման վրա՝ դռնփակ կամ դռնբաց քվեարկությամբ, բացառությամբ Պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:»:***

3. Ընթացակարգը լրացնել **նոր 6.6.** կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.6. Խորհրդի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են ձայնագրել նիստը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով խորհրդի նախագահողին:»:

4. Ընթացակարգը լրացնել **նոր 6.7.** կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.7. Խորհրդի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձը կարող է տեսաձայնագրել նիստը կողմերի համաձայնությամբ՝ խորհրդի որոշման հիման վրա:»:

5. Ընթացակարգը լրացնել **նոր 6.8.** կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.8. Խորհրդակցական սենյակում ձայնագրությունը կամ տեսաձայնագրությունն արգելվում է:»:

6. Ընթացակարգը լրացնել **նոր 9-րդ գլխով** (9.1. և 9.2. կետերով)՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

9.1. Խորհուրդը փաստաբանի դիմումի հիման վրա կարող է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոնի վերաբերյալ տալ ոչ պաշտոնական պարզաբանում, որն ունի խորհրդատվական բնույթ:

9.2. Ոչ պաշտոնական պարզաբանում տալու մասին Խորհրդի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշման ընդունման օգտին «կողմ» են քվեարկել Խորհրդի առնվազն 9 (ինը) անդամ:»:

7. Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

12 դեկտեմբերի 2017թ.
թիվ 25/6-Լ
ք. Երևան